ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
հրավերի պարզաբանման մասին

Հայտարարության սույն տեքստը հաստատված է գնահատող հանձնաժողովի
2019 թվականի հունիսի 18-ի թիվ 2 որոշմամբ և հրապարակվում է
"Գնումների մասին" ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի համաձայն

Ընթացակարգի ծածկագիրը <<ՀՀՌՑ-ԳՀԱՊՁԲ-19/20>>

<<ՀՀՌՑ>> ՓԲԸ կարիքների համար համակարգիչների և համակարգչային սարքերի ձեռքբերման նպատակով կազմակերպված <<ՀՀՌՑ-ԳՀԱՊՁԲ-19/20>> ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը ստորև ներկայացնում է նույն ծածկագրով հրավերի վերաբերյալ 2019 թվականի հունիսի 14-ին ստացված հարցադրումները և դրանց վերաբերյալ 2019 թվականի հունիսի 17-ին տրամադրված պարզաբանումները՝

Հարգելի Մասնակից,

Ի պատասխան ձեր 14.06.2019թ. հարցադրումների հայտնում ենք հետևյալը.

Հարցադրում N 1

Խնդրում ենք պարզաբանել՝ հրավերի 1-ից 4 չափաբաժինների ապրանքների տեխնիկական բնութագրում առկա հետևյալ հղումը՝ «գույնի և ձևի ընտրությունն ըստ պատվիրատուի»: խնդրում եմ հստակեցնել՝ ինչ նկատի ունեք, կոնկրետ ինչը պետք է համապատասխանեցվի պատվիրատուի պահանջներին, չէ որ առաջարկվող ապրանքը պետք է լրացվի՝ հավելված 3.1-ում, ընտրված մասնակցի կողմից: Կանխավ շնորհակալություն:

Պարզաբանում N 1

Հարգելի մասնակից, ի պատասխան Ձեր հարցմանը պարզաբանում ենք, որ 1÷4-րդ չափաբաժիններով նախատեսված ապրանքների գույնի և ձևի ընտրությունը Պատվիրատուն կհամաձայնեցնի առաջին տեղը զբաղեցրած մասնակից/ներ/ի հետ (Տես Գնումների մասին ՀՀ օրենքի 34 հոդվածի 5-րֆ կետի 1-ին ենթակետը): Խոսքը վերաբերում է համակարգչի լրակազմի բաղադրիչների /քեյս, մոնիտոր, ստեղնաշար, մկնիկ/ գույնին՝ բոլորը լինեն նույն գույնի:

Հարցադրում N 2

Խնդրում ենք պարզաբանել, Առաջին տեղի համար նախատեսված փաստաթղթերի ներկայացման ժամկետում՝ համաձայն հրավերի Հավելված 6.1, ապրանքային նշան, արտադրողի անվանում, ծագման երկիր տողատակերում ինչ է լրացվում, եթե համակարգիչը հավաքվում է տարբեր արտադրող ընկերությունների արտադրած բրենդային մասերից/դետալներից/, սակայն հավաքվում և կոմպլեկտավորվում է մեկ այլ կազմակերպության կողմից:

Պարզաբանում N 2

Հարգելի մասնակից, ի պատասխան Ձեր հարցմանը պարզաբանում ենք, որ՝ հայտ ներկայացրած մասնակիցն է տրամադրում տեղեկատվություն արտադրողի, ծագման երկրի և այլնի վերաբերյալ՝ սահմանված ստանդարտներին համապատասխան:

Հարցադրում N 3

Հարգելի գնահատող հանձնաժողով, Չափաբաժին 2-ում մայրական սալիկը նշված է Asus H110M-R, որը ունի HDMI ելք: Խնդրում եմ պարզաբանել, հնարավոր է առաջարկել նմանատիպ սալիկ միայն VGA և DVI ելքերով:

Պարզաբանում N 3

Հարգելի մասնակից, Չափաբաժին 2-ում նշված HDMI ելքով Asus H110M-R մայրական սալիկը հնարավոր է փոխարինել VGA և DVI ելքերով մայրական սալիկով:

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել «ՀՀՌՑ-ԳՀԱՊՁԲ-19/20» ծածկագրով գնահատող հանձնաժողովի քարտուղար **Մ. Նիկոլյանին**:

Հեռախոս՝ *(+374 10) 65 40 73*
Էլեկտրոնային փոստ՝ *hhrc.gnumner@tna.am*
hhrc.gnum@tna.am